ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

22 հոկտեմբերի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

144
(2994)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉ ԳՈՐԾՈՎ ԵՆ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՉԵԼ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՔՊ վարչության անդամ, պետական վերահսկողության ծառայության պետ Ռոմանոս Պետրոսյանին կանչել են քննչական կոմիտեի ԱԱԾ վարչություն ու հարցաքննել: Վերջինս իր ցուցմունքում հայտնել է, որ տագնապի զգացողություն է ունեցել:

Հիշեցնենք, որ դեռեւս փետրվարի 20-ից ՔՊ գրասենյակին, ինչպես նաեւ ՔՊ պատգամավորներ Գուրգեն Արսենյանին եւ Գագիկ Մելքոնյանին պատկանող տարածքներում ռումբ տեղադրելու գործով քրեական վարույթ կա նախաձեռնված ու գործը դատարանում է: ՀՀ քննչական կոմիտեն պարզել էր, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամներին, նրանց աջակիցներին ահաբեկելու համար 2024 թվականի փետրվարի 20-ին քաղաքացին գնացել է Երեւան քաղաքի Գյուլբենկյան 33 հասցեում գտնվող «Միավորված աշխատանքային կուսակցության» գրասենյակի մոտ եւ ժամը 03:50-ին գրասենյակից 9 մետր հեռավորության վրա գտնվող մայթեզրի ծառի տակ տեղադրել է նախապես պատրաստված, որպես պայթեցման միջոց շուրջ 1 կիլոգրամ տրոտիլ եւ պենտալիտ, ավերածություններ գործելու, մարդկանց կյանքից զրկելու, շրջակա շինություններն ամբողջությամբ ավերելու համար պիտանի ինքնաշեն պայթեցման սարքը:

Ապա նույն ժամանակահատվածում պիտանի ինքնաշեն պայթեցման սարքը տեղադրել են Գյուլբենկյան 30/3 հասցեում գտնվող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության տարածքային գրասենյակի մուտքի մոտ՝ այդ կերպ առաջացնելով պայթյունի եւ հրկիզման իրական սպառնալիք. սակայն ՎՀ.-ի կողմից տեղադրված պայթեցման սարքերը չեն պայթել՝ ինքնաշեն պայթեցման սարքերի գործարկման մեխանիզմի հաշվարկված եղանակով չգործելու պատճառով:

Նկատենք, որ ՔՊ գրասենյակի եւ «Միավորված աշխատանքային կուսակցության» հիմնադիր ղեկավար Գուրգեն Արսենյանի գրասենյակի մոտ պայթուցիկ տեղադրելու գործով կալանավորվածները չեն ընդունում առաջադրված մեղադրանքը, սակայն, ռումբ դնելուց առաջ, SMS էին ուղարկել ՊՎԾ պետ, ՔՊ վարչության անդամ Ռոմանոս Պետրոսյանին՝ «Դեռ չե՞ք պայթել, այ....»: Եվ ահա այս հաղորդագրության համար էլ պետական վերահսկողության ծառայության պետ Ռոմանոս Պետրոսյանին հրավիրել են քննչական կոմիտեի՝ պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչություն՝ ցուցմունք տալու:

«Ժողովուրդ» օրաթերթի ձեռքում է հայտնվել Ռոմանոս Պետրոսյանի ցուցմունքը՝ այս գործով արդեն դատարան գնացած:

Հարցին, թե ինչ տեղեկություններ ունի պաշտոնյան պայթեցման գործի վերաբերյալ, Պետրոսյանը պատասխանել է:

«Սույն թվականի փետրվարի 21-ի առավոտյան՝ ժամը 08:00-ի սայմաններում, նկատել եմ, որ իմ ֆեյսբուքյան էջին կեղծ օգտատիրոջ կողմից՝ Ռուբեն Կասյան տվյալներով, հայհոյախառն հաղորդագրություն է ուղարկվել: Նույն օրը՝ 10:30-ի սահմաններում, հիշյալ կեղծ ֆեյսբուքյան էջի կողմից եւս մեկ գրառում է կատարվել իմ ֆեյսբուքյան էջին, որով վերջինս պայթյունի մասին է հայտնել: Նշված գրառումը նկարել եւ պահել եմ: 2024 թվականի փետրվարի 22-ի երեկոյան լրահոսից տեղեկացել եմ, որ Գուրգեն Արսենյանի գրասենյակի մոտ պայթուցիկ սարք է հայտնաբերվել, այդ ժամանակ հիշել եմ նշված գրառման մասին եւ հայտնել եմ իրավապահ մարմիններին»:

Հարցազրույցի ամբողջական տարբերակը կարող եք կարդալ ArmLur.am կայքում:

Ամենատապես ծանոթանալով ակնթարթորեն հարստացած ՔՊ-ականների կենսագրության մանրամասներին՝ «Ժողովուրդ» օրաթերթը հանգում է համատարած այն փաստին, որ նրանց մեծագույն մասը մինչ հեղափոխությունը, չնչին գումարներ չունենալու պատճառով, պարտքերի տակ են եղել, անգամ դատական տարբեր հայցերի հորձանուտում են հայտնվել: «Ժողովորդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից պարզեց, որ հերթական հեղափոխականը, որի նկատմամբ 2017 թվականին, ինչ-որ հարցի շրջանակում, «Ակբա» բանկը ընդամենը 171 ԱՄՆ դոլարի բռնագանձման հայց է ներկայացրել՝ Արփի Դավոյանն է: Ամենահետաքրքիրը եւ մտահոգիչն այն է, որ իրեն ազնիվ հռչակած Դավոյանի նկատմամբ հայցը կարճվել է հենց հեղափոխության տարում՝ 2018 թվականի սեպտեմբերին՝ հեղափոխությունից հետո, երբ Դավոյանը վարչապետի նորանշանակ օգնականն էր արդեն: Իսկ դյուրահավատ ժողովրդին 2018-ին թվում էր, թե «անձնազոհ ՔՊ-ականներին» հետաքրքրում են վեհ արժեքներ...

Ադախկին թաղապետ, հավատարիմ ՔՊ-ական Ավետ Պողոսյանին իշխանությունն առանց պաշտոնի չի ուզում թողնել: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ հուլիսի 3-ից Ավետ Պողոսյանը ազատվեց Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալի պաշտոնից: Բայց նույնիսկ սրանից հետո Պողոսյանն առանց պաշտոնի երկար չմնաց: Այսօր մեկնարկող նստաշրջանի օրակարգում է նաեւ ՀՌՀ անդամի ընտրության հարցը, իսկ ՀՌՀ անդամի պաշտոնում միակ առաջադրված թեկնածուն Ավետ Պողոսյանն է: Ավետ Պողոսյանի կենսագրությունն ուսումնասիրելիս նկատում ենք, որ նա լրագրության ոլորտում չի ունեցել որեւէ գործունեություն: ՀՀ Սահմանադրության հոդված 197-ը սահմանում է հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի կազմը եւ կազմավորման կարգը: Հոդվածի 3-րդ կետով սահմանվում է. «Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել բարձրագույն կրթություն ունեցող, պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող յուրաքանչյուր ոք, որը զանգվածային լրատվության բնագավառում հեղինակավոր մասնագետ է: Հանձնաժողովի անդամների նկատմամբ օրենքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ»: Թեեւ պատգամավորի պաշտոնին կարող է հավակնել յուրաքանչյուրը՝ առանց մասնագիտական խտրականության, եւ օրենքով՝ ՀՌՀ անդամի ընտրության կարգը հենց այդպես էլ սահմանված է, այնուամենայնիվ հստակ կետ կա, որին պետք է համապատասխանի ՀՌՀ անդամը, այն է՝ լինել «զանգվածային լրատվության բնագավառում հեղինակավոր մասնագետ». իսկ գաղտնիք չէ, որ Ավետ Պողոսյանը ո՛չ հեռուստատեսության հետ կապ ունի, ո՛չ ռադիոյի: Նա մինչ հեղափոխությունը, ըստ մամուլի, տաքսի է վարել ԱՄՆ-ում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Գործադիրը նոր փոփոխություններ է առաջարկում ՀՀ ընտրական օրենսգրքում: Նախագծով առաջարկվում է քրեականացնել ընտրությանը մասնակցող թեկնածուներին ինքնաբացարկ ներկայացնելուն կամ մանդատից հրաժարվելուն հարկադրելը: Փոփոխվող հոդվածներից մեկն էլ հետեւյալն է՝ «Ոչ ոք չի կարող հարկադրել ընտրողին՝ բացահայտելու, թե ինչպես է ընտրողը մտադիր քվեարկելու, կամ ինչպես է քվեարկել թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին»: ԸՕ համապատասխան փոփոխություններից հետո վարչական պատասխանատվություն է նախատեսվելու թեկնածուի կողմից գույքի եւ եկամուտների մասին հայտարարագիրը սահմանված ժամկետում չներկայացնելու, ինչպես նաեւ սահմանված ժամկետի խախտմամբ ու չթույլատրված վայրում քարոզչական պաստառ ու քարոզչական տպագիր այլ նյութեր փակցնելու համար: Դեռ 2022թ.-ից նախաձեռնված ԸՕ փոփոխությունների նախագիծը, որը գլխադասային հանձնաժողովում դրական եզրակացություն է ստացել, առաջին ընթերցմամբ քննարկվելու է նաեւ այսօր մեկնարկելիք ԱԺ նստաշրջանի ընթացքում: Առաջին ընթերցումից հետո ՔՊ-ն հանրային լսումներ է նախաձեռնելու, որից հետո այն արդեն երկրորդ անգամ կքննարկվի եւ կքվեարկվի ԱԺ-ում: Խորհրդարանականներն այս նստաշրջանի ընթացքում նաեւ ՀՌՀ անդամ եւ դատավորներ կընտրեն: ՀՌՀ անդամի առաջադրված միակ թեկնածուն ԲՏԱ նախկին փոխնախարար Ավետ Պողոսյանն է: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորի պաշտոնի հավակնորդները երեքն են՝ Գուրգեն Մալխասյան, Վիգեն Քոչարյան եւ Ատոմ Հայրապետյան, իսկ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի պաշտոնում առաջադրվել են Հովհաննես Ավագյանի, Նելլի Բաղդասարյանի եւ Հայկ Գրիգորյանի թեկնածությունները:



ԶՐՈՒՅՑ

ԳՆԱՀԱՏԱԿԱՆ. ԱԺ ՎԵՐՋԻՆ ՑՆՑՈՒՄՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ԱԱԾ նախկին տնօրեն Միքայել Համբարձումյանի հետ՝ Ազգային ժողովում ՀՀ ֆինչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանի եւ ՔՊ-ական պատգամավոր Հովիկ Աղազարյանի միջադեպի, Կոմիտեի նախագահի հասցեին հնչած «ռեպլիկի» եւ այդ դեպքից հետո ծավալված իրադարձությունների մասին:

-Պարոն Համբարձումյան, Ձեզ՝ որպես բարձրաստիճան սպայի, ով ղեկավարել է այն կարեւորագույն կառույցը, որը ղեկավարել է նաեւ Արգիշտի Քյարամյանը, կխնդրեի գնահատել նրա վարքն օրենսդիր մարմնում:

-2020 թվականի մայիսին ԱԱԾ փոխտնօրենի պաշտոնում երբ նշանակվեց Արգիշտի Քյարամյանը, իմ ղեկավարման ներքո գտնվող կոռուպցիայի հակազդման եւ տնտեսական անվտանգության 5-րդ դեպարտամենտի աշխատանքների կոորդինացումը վերապահվեց նրան: Ես Քյարամյանին չեմ ճանաչել եւ իր հետ աշխատելու առիթ նախկինում չեմ ունեցել: Չնայած համակարգում նոր մարդ լինելուն՝ կարճ ժամանակում նա ընկալեց իրավիճակը, դիրքավորվեց եւ, թույլատրելիի սահմաններում իր ինքնուրույնությունը պահպանելով, կարողացավ գործողություններ իրականացնել: Քյարամյանի հետ աշխատանքս հեշտ է ստացվել, կար փոխադարձ վստահություն: Ես տեսնում էի, որ նա վախկոտ չէ, հնարավոր ձախողումներից ավելորդ չի ապահովագրում իրեն, մեզ հարվածի տակ դնելով՝ չի փորձում քծնանքով, ձեւական ջանասիրությամբ հաճոյանալ վարչապետին, նրա մերձավոր թիմակիցներին: Փոխադարձ վստահության արդյունքում 5-րդ դեպարտամենտի աշխատանքը նոր թափ ստացավ, չնայած եղել են նաեւ գործեր՝ հատկապես ներքին անվտանգությանն առնչվող, որոնցով, իմ կարծիքով մենք չպետք է զբաղվեինք: Վարչապետի քաղաքական կամ մերձավոր թիմից նշանակումը նշված պաշտոնում, համենայն դեպս Քյարամյանին ես այդպիսին եմ համարել, հույս տվեց, որ ԱԱԾ-ն զերծ կմնա ավելորդ անվստահությունից, կառուցվածքային անհարկի ցնցումներից, ինչն այդ ժամանակահատվածում իսկապես այդպես էլ եղավ:

Այլ կերպ ասած՝ Արգիշտի Քյարամյանն ինքնուրույնություն, իր դեմքն ունեցող մարդ է՝ գաղափարով ու մոտեցումներով նվիրված վարչապետին: Ընդհանրապես, կա մարդու տեսակ, ով անհարմար է դառնում շրջապատին, քանի որ չի հայտնվում ազդեցության տակ, ենթարկվում է բացառապես իր անմիջական ղեկավարին՝ դրանով իսկ մնալով իր մասնավոր գործառույթների շրջանակներում:

Նկատի ունեցեք, որ «իր եսը» չունեցող, բոլորին հաճոյանալու պատրաստ ղեկավարը թուլացնում է կառույցը, խախտում նրա տեղն ու դերը իրավապահ համակարգի հիերարխիայում, որի ականատեսը, ցավոք, եղել եմ ոչ վաղ անցյալում՝ այլ ղեկավարի օրոք:

Ինչ վերաբերում է Ազգային ժողովում տեղի ունեցած միջադեպին, կարծում եմ՝ այն տեւական ժամանակ կողմերի միջեւ ձեւավորված լարվածության հետեւանք էր, որն այս կերպ դրսեւորում ստացավ: Ես հիշում եմ, որ մինչ այդ, մամուլում Քյարամյանին առնչվող մի շարք հրապարակումներ եղան, թե իբր նա է պատգամավորների հաջորդ թիրախը՝ Գրիգոր Մինասյանից հետո: Անխոս, Քյարամյանը պետք է իրեն հավասարակշռված ու զուսպ պահեր, բայց չմոռանանք, որ ԱԺ-ում մենք ականատես ենք եղել շատ ավելի վատ ու պախարակելի, նույնիսկ խուլիգանական իրադարձությունների, ինչը չի ունեցել որեւէ հետեւանք ու այսօր մոռացության է մատնվել:

-Արդյոք Վանեցյանի՞ն նկատի ունեք ԱԱԾ նախկին ղեկավարներից, ով, «իր եսը» չունենալով, թուլացրել է կառույցը:

-Բացարձակապես. ես միշտ ասել եմ, որ Վանեցյանի շնորհիվ 2018 թվականի իրադարձություններից հետո ԱԱԾ-ն զերծ մնաց ցնցումներից, կառուցվածքային փոփոխություններից, օպերատիվ եւ ղեկավար կազմի «ջարդից»: Նա նպաստեց նոր իրողությունում ԱԱԾ աշխատանքի կազմակերպմանը եւ հասարակության կողմից դրական գնահատականի արժանանալուն: Նշածս պաշտոնյայի վերաբերյալ այլ մեկնաբանություն տալ չեմ ցանկանում, կարծում եմ՝ այսքանն էլ բավարար էր:

-Նիստ հրավիրողը «տղայական պահվածք» բնութագրեց Քյարամյանի պահվածքը, Դուք, կարծես, չեք կիսում այդ կարծիքը:

-Ես զերծ կմնամ Քյարամյանի պահվածքը տղայական կամ տղամարդկային բնութագրելուց, քանի որ, կրկնում եմ՝ Քյարամյանը պետք է իրեն հավասարակշռված ու զուսպ պահեր՝ անկախ պատճառներից ու դրան նախորդած իրադարձություններից. նրան դա պարտավորեցնում է զբաղեցրած պաշտոնը, ունեցած դիրքը: Ընդհանրապես, քաղաքական իշխանության կողմից ուժային կառույցների կամայականությունների հանդուրժումը հանգեցնում է ամենակարողության, անպատժելիության թյուր պատրանքի, այս դեպքում՝ գուցե նաեւ դրա ականատեսն էինք:

Զրուցեց ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՍՏԱՏՄԱՆ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ 3 ԹԵԿՆԱԾՈՒԻ ՆՈՐ ՑՈՒՑԱԿ

Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցիչը տեղեկացնում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի օգոստոսի 31-ի N882-Ա որոշման 71-րդ կետը, ՀՀ վարչապետի հաստատմանն է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների՝ ընտրության փաստաթղթային ստուգման եւ հարցազրույցի փուլերն անցած եւ առավել բարձր միավորներ հավաքած հավակնորդների նոր ցուցակը՝ հետեւյալ կազմով.

1. Գրիգորյան Վահե
2. Կարապետյան Նորա
3. Մարգարյան Աննա

Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆԸ ԴՈՒՐՍ Է ԵԿԵԼ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՑԱՆԿԻՑ

«Տրոյկա Դիալոգ» ներդրումային ընկերության հիմնադիր Ռուբեն Վարդանյանը դադարել է բաժնեմաս ունենալ «Ավտոինվեստ» ՍՊԸ-ում, որը ցուցակագրված է որպես ԿամԱԶ բեռնատարների խոշորագույն ռուսական արտադրողի բաժնետերերից մեկը:

Գործարարի՝ «Ավտոինվեստ»-ում ունեցած 15% մասնաբաժինը հոկտեմբերի 17-ին փոխանցվել է Դմիտրի Արտյակովին՝ «Ռոստեկ»-ի ղեկավարի առաջին տեղակալ Վլադիմիր Արտյակովի որդուն: Այս փաթեթի արժեքը Մոսկվայի բորսայում գնահատվում է 3,11 մլրդ ռուբլի:

ՉԻ ՄԱՄՆԱԿՑԻ

«Հայաստան» խմբակցությունը չի մասնակցի ԱԺ լիագումար նիստերի օրակարգում ընդգրկված Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պետական սահմանի սահմանազատման հանձնաժողովների համատեղ գործունեության մասին կանոնակարգը վավերացնելու մասին հարցի քվեարկությանը:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեց «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանը:

Այս փաստաթղթի համաձայն՝ Երեւանն ու Բաքուն համաձայնել են սահմանազատումն իրականացնել ըստ 1991 թվականի Ալմա-Աթայի հռչակագրի, բայց այդ համաձայնությունը վերջնական չէ: Կանոնակարգում նշվում է, որ գործընթացը հնարավոր է հետագայում՝ «Խաղաղության համաձայնագրի» ընդունումից հետո, այլ սկզբունքներով ընթանա: Կանոնակարգը 7 հոդված ունի, այնտեղ հիմնականում գործընթացին վերաբերող տեխնիկական տվյալներ են, ընդհանրական ձեւակերպումներ:

Հավելենք, որ Ադրբեջանում այս փաստաթղթի ընդունման գործընթացն անգամ չի մեկնարկել. իսկ միայն ՀՀ վավերացմամբ տվյալ փաստաթուղթը ոչինչ չարժե: Այն կգործի երկու կողմերի վավերացումից հետո միայն:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀԱՃԱԽ Է ԳՅՈՒՄՐԻ ԱՅՑԵԼՈՒՄ

ՄՏԱԴԻՐ Է ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ՊԱՇՏՈՆԱ՞ՆԿ ԱՆԵԼ

Շաբաթ օրը՝ հոկտեմբերի 19-ին, Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ այցելել էր Շիրակի մարզ:

Նա շրջել էր համայնքներում՝ ծանոթացել կատարվող աշխատանքներին, հանդիպել բնակիչների հետ, նաեւ, առիթը բաց չթողնելով, հեծանիվ վարել Գյումրիում:

Հոկտեմբերի 19-ին Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ Գյումրիում նաեւ ՔՊ-ն նիստ անցկացրեց, որի մասնակցում էին նաեւ Շիրակի մարզպետ Մուշեղ Մուրադյանը, ՔՊ կուսակցության փոխնախագահ Վահագն Ալեքսանյանը, պատգամավորներ Արուսյակ Մանավազյանը, Դավիթ Առուշանյանը, Գյումրու ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Քնարիկ Հարությունյանը եւ այլ կուսակցականներ:

Դեռ տարեսկզբից մամուլում տարբեր տեղեկություններ են շրջանառվում , որ Նիկոլ Փաշինյանը մտադիր է Շիրակի մարզպետին պաշտոնանկ անել:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Շիրակի մարզպետ Մուշեղ Մուրադյանը, անդրադառնալով շրջանառվող այս տեղեկություններին՝ նշում է, թե իրեն հայտնի չէ, որ մտադիր են պաշտոնանկ անել, ավելին՝ մարզպետը պնդում է, թե այդ խոսակցություններն անձնական շահեր ունեցող մարդիկ են տարածում:

Նրա խոսքով՝ հոկտեմբերի 19-ին Գյումրիում կայացած կուսակցական նիստում աշխատանքային հարցեր են միայն քննարկվել:

Չնայած մարզպետի այս պնդմանը՝ մի բան հստակ է՝ վերջին շրջանում Շիրակի մարզը, մասնավորապես՝ Գյումրին, իշխանությունների ուշադրության կենտրոնում է, թե՛ վարչապետը, թե՛ նրա տիկինը հաճախ են Գյումրի այցելում, եւ, ըստ մամուլի, այդ այցերը քաղաքական տարբեր հանդիպումներով եւ քննարկումներով են ուղեկցվում:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԲԱՅԴԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ՝ ԱԼԻԵՎԻՆ

ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը նամակ է հղել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին, որում, մասնավորապես, ասվում է. «Ուրախ եմ, որ Ադրբեջանն ու Հայաստանը ջանքեր են գործադրում խաղաղության պայմանագիր կնքելու ուղղությամբ, ինչը կծառայի երկու երկրների միջեւ հարաբերությունների կարգավորմանը: Ցանկանում եմ հավաստիացնել, որ ԱՄՆ-ն պատրաստ է աջակցել Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ կայուն եւ արժանապատիվ խաղաղության ձեռքբերմանը, որը վերջ կդնի բազմադարյա հակամարտությանը:

Խաղաղության համաձայնագիրը կվերափոխի ողջ տարածաշրջանը՝ ապահովելով ավելի մեծ առեւտուր, ներդրումներ եւ կապեր Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի միջեւ: Քանի որ աշխարհի ուշադրությունը COP29-ի հետ կապված սեւեռվում է դեպի Բաքուն՝ Դուք լավ հնարավորություն ունեք համաշխարհային հանրությանը ցույց տալու ձեր նվիրվածությունը խաղաղությանը: Կոչ եմ անում ավարտել գործընթացը ընթացիկ տարում:

Իմ խնդրանքով իմ հատուկ օգնական Մայքլ Քարփենթերը Ձեզ կտեղեկացնի կոնկրետ քայլերի մասին, որոնք մենք պատրաստ ենք ձեռնարկել եւ կպարզի Ձեր դիրքորոշումը Հայաստանի հետ բանակցությունների վերաբերյալ: Հուսով եմ՝ Դուք կօգտվեք այս հնարավորությունից՝ տարածաշրջանում հանուն համատեղ բարգավաճման եւ բարօրության նոր կուրս ընտրելու համար»:

ՄԱՀԱՑԵԼ Է ՖԵԹՈՒԼԼԱՀ ԳՅՈՒԼԵՆԸ

Մահացել է պաշտոնական Անկարայի կողմից ահաբեկչական հռչակված FETÖ կազմակերպության ղեկավար, 2016 թվականի հեղաշրջման փորձի կազմակերպման մեջ մեղադրվող իսլամի քարոզիչ, միլիարդատեր Ֆեթուլլահ Գյուլենը, ով ապրում էր ԱՄՆ-ում:

83-ամյա Գյուլենի մահվան մասին տեղեկությունը հաստատել է նաեւ նրա եղբորորդին՝ Էբուսսեմե Գյուլենը:

Ֆեթուլլահ Գյուլենը մահացել է հոկտեմբերի 20-ի երեկոյան: Տեղեկության համաձայն՝ մահը վրա է հասել առողջական վիճակի պատճառով:

ԱՆՈՐՈՇ Է

Մոլդովայում հոկտեմբերի 20-ին անցկացվել են նախագահական ընտրություններ եւ Եվրամիությանն անդամակցելու շուրջ հանրաքվե, որոնց նախնական արդյունքների հրապարակումից հետո երկրի նախագահ Մայա Սանդուն «օտարերկրյա ուժերի հետ աշխատող հանցավոր խմբավորումներին» մեղադրել է ընտրություններին միջամտելու մեջ:

POLITICO-ն նշում է, որ ձայների 98,29 %-ի հաշվարկից հետո Մոլդովայի ընտրական հանձնաժողովի հրապարակած նախնական արդյունքների համաձայն՝ քվեարկողների 50 %-ը դեմ է քվեարկել մինչեւ 2030 թվականը երկրի միացմանը Եվրամիությանը, իսկ 50 %-ը սատարել է այդ նախաձեռնությունը:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 235

5 ՄԻԼԻՈՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՉԵՆՔ ՈՒՆԵՆԱ

2019 թվականի օգոստոսի 5-ին Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում Նիկոլ Փաշինյանը Հայաստանի եւ Արցախի մասով ուշագրավ խոստումներ տվեց. «Մինչեւ 2050 թվականը պետք է կարողանանք լուծել հետեւյալ խնդիրները.

Հայաստանի բնակչությունը հասցնել առնվազն 5 միլիոն մարդու:

Ստեղծել 1 միլիոն 500 հազար աշխատատեղ, լուծել 2.5 միլիոն մարդու զբաղվածության հարցը եւ վերացնել աղքատությունը:

Հայաստանը դարձնել արդյունաբերական երկիր, 15-ապատկել Հայաստանի համախառն ներքին արդյունքը:

Ունենալ 10 մլրդ ԱՄՆ դոլար արժեքը գերազանցող առնվազն 5 հայկական տեխնոլոգիական ընկերություն եւ 10 000 աշխատող ստարտափ:

7-ապատկել միջին աշխատավարձը:

Բանակի մարտունակության ցուցանիշով տեղ զբաղեցնել աշխարհի առաջատար երկրների առնվազն առաջին 20-յակում:

Ունենալ աշխարհի 10 ամենաարդյունավետ հետախուզական ծառայություններից մեկը:

Ապահովել առողջապահական ծառայությունների 100 տոկոսանոց հասանելիություն եւ առողջապահության ֆինանսավորումը 20-ապատկել:

Կրթությունը դարձնել ազգային ապրելակերպ, կրթության եւ գիտության ֆինանսավորումը 20-ապատկել:

Հայաստան այցելող զբոսաշրջիկների թիվը հասցնել 15 միլիոնի:

Հայաստանի ֆուտբոլի հավաքականը դարձնել Եվրոպայի եւ կամ աշխարհի առաջնության մեդալակիր, նվաճել 25 օլիմպիական ոսկե մեդալ եւ շախմատի աշխարհի անհատական չեմպիոնի կոչումը»:

Սակայն իրականում Հայաստանի բնակչությունը 5 մլն դարձնելու խոստումն այս պահին կարելի է համարել անիրականանալի: Հայաստանում 2022 թվականին անցկացված մարդահամարի համաձայն՝ մշտական բնակչությունը կազմում է 2 մլն 932 հազար 731 մարդ: Ի համեմատ նախորդ մարդահամարի արդյունքների, որն իրականացվել է 2011 թվականին եւ որի համեմատ ՀՀ-ում մշտական բնակչության թիվը նվազել է շուրջ 86 հազար 123-ով: Համաձայն ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակի վերլուծության՝ 2050 թվականին Հայաստանի մշտական բնակչությունը կնվազի՝ կազմելով 2,6 մլն մարդ, այսինքն՝ Նիկոլ Փաշինյանի խոստացածի կեսը:

2.5 մլն մարդու զբաղվածության հարց լուծելը եւս անիրականանալի է, զուտ այն պատճառով, որ այդ թվականին, համաձայն վերլուծության, այդքան չափահաս աշխատունակ բնակչություն Հայաստանում չի լինելու: Եթե, իհարկե, դրսից չի բերվելու աշխատուժ, ինչպես այսօր է՝ ի հաշիվ հնդիկների:

Անդրադառնալով բանակի մարտունակության ցուցանիշին. Նիկոլ Փաշինյանն իշխանության գալով խոստովանում էր, որ ՀՀ բանակը տարածաշրջանի ամենամարտունակն է լինելու: Վերջին շրջանում, սակայն, նա քանիցս նշել է, որ ՀՀ բանակը չի կարող պաշտպանել Հայաստանի անվտանգությունը: Կարելի է անվտանգային պատկերը ընկալել թերեւս մեկ օրինակով. 2021 թվականի մայիսի 12-ին, առանց կրակոցի թշնամին մտավ Հայաստան՝ Սյունիքի մարզից օկուպացնելով ավելի քան 40 քառակուսի կիլոմետր եւ հասնելով մինչեւ Սեւ լճի կեսը: Կառավարության ղեկավարը հայտարարեց, որ Սեւ լճի 30 տոկոսի համար պատերազմ չի մղելու: Ոչինչ չձեռնարկվեց թշնամուն հետ մղելու համար: Կարելի է ցավով արձանագրել, որ Հայկական բանակը նահանջ է կատարել «տարածաշրջանի ամենամարտունակից», դառնալով «ամենաոչմարտունակ»-ը:

Աշխարհի 10 ամենաարդյունավետ հետախուզական ծառայություններից մեկը ունենալը եւս կասկածելի է, մանավանդ որ ի սկզբանե այն դրված է սխալ հենքի վրա: Օրինակ՝ նորաստեղծ արտաքին հետախուզական ծառայությունը ղեկավարում է Քրիստինե Գրիգորյանը, որը ուղիղ մեկ տարի՝ 2022 թվականի հունվարից մինչեւ 2023 թվականի հունվարը զբաղեցրել է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնը, եւ Հայաստանի ամենակայացած ինստիտուտներից համարվող օմբուդսմենի հեղինակությունը սկսել է անկում ապրել: Քրիստինե Գրիգորյանի աչքի առաջ կարմիր բերետավորները Եռաբլուրից, բռնություն կիրառելով, բերման ենթարկեցին զոհված զինծառայողների հարազատներին, իսկ նա պատշաճ գնահատական անգամ չտվեց:

Մյուս խոստումներին կարելի է չանդրադառնալ՝ դատելով նրանից, որ այս խոստումից անցել է 4 տարի, իսկ պատկերը, առնվազն մտահոգիչ է, եւ այսպես շարունակվելու դեպքում 2050 թվականին վստահ կարելի է արձանագրել այս խոստումների լիակատար ձախողումը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԺ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՏՎԵԼ

Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը դրական եզրակացություն է տվել «Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգի վավերացմանը:

Կանոնակարգը վավերացնելու մասին նախագիծը հանձնաժողովում 3 ժամ տեւած քննարկումից հետո քվեարկությամբ ստացել է 5 կողմ, 3 դեմ ձայներ: Այն կքննարկվի ԱԺ առաջիկա լիագումար նիստում:

Կանոնակարգը հանձնաժողովում ներկայացրել է փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը: Հայաստանի կառավարությունը հավանություն է տվել կանոնակարգը վավերացնելու վերաբերյալ օրենքի նախագծին:

ԻՆՉՈՒ ՉԵՆ ՀԲԱՎԻԲԵԼ

Երեկ՝ հոկտեմբերի 21-ին, նշվում էր Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության 20-ամյակի առթիվ կազմակերպված «Օմբուդսմանական/ Մարդու իրավունքների ազգային հաստատությունները ճգնաժամային իրավիճակներում. Ճկունություն եւ մարտահրավերներ» խորագրով երկօրյա բարձր մակարդակի միջազգային համաժողովը: Պաշտոնական բացմանը ներկա են գտնվել ներկա ՄԻՊ-ը՝ Անահիտ Մանասյանը, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, ՀՀ ԱԺ-ի նախագահ Ալեն Սիմոնյանը, մի շարք դեսպաններ եւ այլ անձինք:

ArmLur.am-ը նկատել է, որ միջոցառմանը նախկին պաշտպաններից ներկա է գտնվել միայն Քրիստինե Գրիգորյանը, իսկ մյուսները՝ Կարեն Անդրեասյանը, Արման Թաթոյանը եւ առաջին ՄԻՊ Լարիսա Ալավերդյանը չեն եղել միջոցառմանը:

Կապ հաստատեցինք ՀՀ առաջին ՄԻՊ Լարիսա Ալավերդյանի հետ՝ հասկանալու՝ ի վերջո իրենց առաջարկ եղե՞լ է, թե՞ ոչ: Վերջինս ասաց, որ՝ ո՛չ, հրավեր չի եղել:

Խոսեցինք նաեւ Արման Թաթոյանի մամուլի խոսնակ Դիանա Հակոբյանի հետ, ումից կրկին ստացանք նույն պատասխանը՝ հրավեր չի եղել: ArmLur.am-ը կապ հաստատեց նաեւ ՄԻՊ խորհրդական Արթուր Ասլանյանի հետ՝ հասկանալու, թե ինչու է Քրիստինե Գրիգորյանը միայն ներկա գտնվել եւ ինչու հրավեր չի եղել մյուս նախկին ՄԻՊ-երին, վերջինս ասաց. «Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության 20-ամյակին նվիրված հոկտեմբերի 21-ին տեղի ունեցած միջազգային համաժողովը նախանշված միջոցառումներից առաջինն էր, եւ նախատեսված էր բացառապես պետական մարմինների ներկայացուցիչների, դեսպանների, միջազգային գործընկերների համար:

Առաջիկայում իրականացվելու են նաեւ Պաշտպանի հաստատության 20-ամյակին նվիրված այլ միջոցառումներ, այդ թվում՝ նախատեսված ինչպես ներկայիս աշխատակազմի, այնպես էլ նախկին աշխատակիցների եւ տարբեր ժամանակահատվածների Պաշտպանների համար:

ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՎԵԼ

«ՉԱՂ ՌՈՒՍՏԱՄԻ» ՈՒ «ՖԱՋԻ» ԹԻՄԱԿԻՑՆԵՐԸ ԾԵԾԵՑԻՆ ՄԻՄՅԱՆՑ

Դատարանը որոշում է կայացրել քրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանի՝ Ֆազի եւ նրա ընկերների կողմից Կենտրոնի դատարանի բակում ծեծկռտուքի գործով:

Մասնավորապես, 2024 թվականին սպանված Սերգեյ Գրիգորյանի մասով գործը կարճվել է, իսկ ահա նրա ընկերներից ոմանք պայմանականորեն ազատ են արձակվել, իսկ ոմանց էլ պատիժ է սահմանվել՝ տուգանքի տեսքով: Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ քրեական հեղինակություն Ֆազի ընկերներից մեկն էլ՝ Գագիկ Սարգսյանը, դատարանի որոշմամբ արդարացվել է:

Իսկ ի՞նչ էր կատարվել

2022 թվականին Կենտրոնի դատարանում միջադեպ էր եղել, ու միջադեպի «հերոսներն» էին կրիմինալ աշխարհում հայտնի Ռուստամ Ստեփանյանը՝ «Չաղ Ռուստամ» մականվամբ եւ Սերգեյ Գրիգորյանը՝ «Ֆազ» մականվամբ: Միջադեպը տեղի էր ունեցել Կենտրոն եւ Նորք-Մարաշ շրջանների ընդհանուր իրավասության դատարանի բակում:

«Ֆազի» եւ «Չաղ Ռուստամի» կողմնակիցներն իրար ծեծել էին: Ծեծկռտուքին միջամտել էին ոստիկանության աշխատակիցները, որից հետո «Ֆազը» դիմել էր փախուստի, իսկ «Չաղ Ռուստամը» ավելի ուշ ներկայացել էր ոստիկանություն:

Քրեական գործ հարուցվեց, սակայն Ռուստամին չկալանավորեցին, իսկ Սերգեյ Գրիգորյանը կալանավորվեց. ավելի ուշ դատավոր Արուսյակ Ալեքսանյանը նրան ազատ արձակեց՝ 2,5 միլիոն գրավի դիմաց:

Արդյունքում, այս արարքի համար դատարանի առաջ կանգնեցին Արման Ենոքյանը, սպանված Սերգեյ Գրիգորյանը, Վահրամ Մարգարյանը, Բորիս Սիմոնյանը, Գագիկ Սարգսյանը:

Վերջիններիս մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք, 2022 թվականի օգոստոսի 22-ին՝ ժամը 15:40-ի սահմաններում, մի խումբ անձանց հետ կատարել են խուլիգանություն, այն է՝ ցուցաբերել են հասարակության նկատմամբ անհարգալից եւ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք, որը դրսեւորվել է հայհոյանքներով եւ համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ, մարդկանց անդորրը խախտելով, որի ընթացքում մի խումբ անձանց հետ կատարել է նաեւ ֆիզիկական ներգործություն՝ մեկից ավելի հարվածներ է հասցրել Զորիկ Վարդանյանին եւ Տիգրան Մանթաշյանին՝ Զորիկ Վարդանյանին պատճառելով մարմնական վնասվածքներ, իսկ Տիգրան Մանթաշյանին՝ ֆիզիկական ցավ:

Ըստ էության՝ քրեական հեղինակությունների դատարանի վեճը ավելի էր խորացրել կողմերի միջեւ լարվածությունը, ինչի արդյունքում 2024 թվականին քրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանին՝ Ֆազին, սպանեցին, ու գործով կալանավորված է քրեական հեղինակություն Ռուստամ Ստեփանյանը՝ «Չաղ Ռուստամը»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԵՐԵՔ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ՎԱՅՐ ԸՆԿՆԵԼՈՒ ԴԵՊՔԻ ԱՌԹԻՎ

Հոկտեմբերի 20-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արարատի բաժնից հաղորդում է ստացվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 19:20-ի սահմաններում, Արարատի մարզում՝ ՈԿՖ բանավանի կամուրջի վրա, երթեւեկության ժամանակ չպարզված հանգամանքներում բացվել է «TEMSA BG 124 H» մակնիշի ավտոբուսի հետեւի դուռը, ինչի հետեւանքով 3 ուղեւոր ընկել է ճանապարհին եւ ստացել մարմնական վնասվածքներ:

Հաղորդման առթիվ նույն օրը ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Վեդիի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 1-ին մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Վարորդի մասնակցությամբ դեպքի վայրում՝ Արարատի մարզի ՈԿՖ բանավանի կամուրջի սկզբնամասում, կատարվել է զննություն, զննության է ենթարկվել նաեւ ճանապարհի այդ հատվածում՝ դեպի Երեւան տանող ուղեմասում, կայանված վերոնշյալ ավտոբուսը:

Դեպքի վայրում արգելակման ու անվադողի հետքեր չեն եղել: Ավտոբուսի զննությամբ վնասվածքներ չեն հայտնաբերվել: Պարզվել է նաեւ, որ ավտոբուսն ունի 36 ուղեւորի համար նախատեսված նստատեղեր, իսկ հետեւի դռան մոտ՝ սրահում, առկա է սեղմակ, որը սեղմելուց հետո ավտոբուսի դուռը փակվել եւ բացվել է:

Զննությունից հետո ավտոբուսը ճանաչվել է իրեղեն ապացույց եւ հանձնվել ոստիկանության պահպանմանը:

Ստուգվել է վարորդի՝ հնարավոր ալկոհոլ օգտագործած լինելու հանգամանքը, վերջինս գտնվել է սթափ վիճակում:

Պարզվել է, որ հոկտեմբերի 20-ին Երեւանի դպրոցներից մեկի 6-րդ դասարանի աշակերտները եւ նրանց ծնողները, ընդհանուր՝ 33 հոգի, Երեւան քաղաքից պատվերով, վերոնշյալ ավտոբուսով մեկնել են Վայոց ձորի մարզ՝ Նորավանք՝ էքսկուրսիայի: Երեւան քաղաք վերադառնալիս՝ ժամը 19:20-ի սահմաններում, երբ հասել են ՈԿՖ բանավանի կամուրջի սկզբնամաս, ընթացքի մեջ գտնվող ավտոբուսի հետեւի դուռը, այս պահին քննությամբ ստուգման ենթակա, չպարզված հանգամանքներում բացվել է, ինչի հետեւանքով երեխաներից մեկն ընկել է ճանապարհի եզրին, մյուս երեխան, ապա նաեւ մոտ գտնվող ծնողներից մեկը իրար հետեւից փորձել են օգնության հասնել, սակայն չկարողանալով՝ նույնպես ընկել են ճանապարհին:

Ստացած մարմնական վնասվածքներով նրանք նախ՝ տեղափոխվել են «Արարատի բժշկական կենտրոն» ՓԲԸ, որտեղից երկու անչափահասները տեղափոխվել են Երեւան քաղաքի երկու տարբեր բուժհաստատություններ: Ըստ բուժհաստատություններից ստացված տվյալների՝ տուժածների վիճակը բավարար է:

Նախաքննությունը շարունակվում է:

ԱՐՋԱՔԱՆՑՅԱՆԸ ԸՆԿԵԼ Է ԴԱՏԱՐԱՆԻ ԴՌՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ԱԺ նախկին պատգամավոր Տիգրան Արզաքանցյանը ընկել է դատարանի դռները: Նա մի քանի հայց է ներկայացրել հարկադիր կատարման ծառայության դեմ:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմեց հարկադիր կատարման ծառայություն՝ հասկանալու համար, թե ինչ խնդիր ունի նախկին պատգամավորը: Ի պատասխան՝ հայտնեցին. «Թիվ ՎԴ2/0753/05/24, թիվ ՎԴ2/0754/05/24, թիվ ՎԴ2/0752/05/24 եւ թիվ ՎԴ2/0749/05/24 վարչական գործերի շրջանակներում պարտապան Տիգրան Արզաքանցյանի կողմից վիճարկվում են ՀԿԱԾ-ում հարուցված 4 կատարողական վարույթների շրջանակներում 06.08.2024թ.-ին կայացված «Կատարողական վարույթը կասեցնելու մասին» որոշումներ, որոնք կայացվել են հիմք ընդունելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ կետի եւ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումները»:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀՆՉԵԼ Է ԿՐԱԿՈՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, թե Երեւանի որ դպրոցից է երեխան հրազենային վնասվածքով տեղափոխվել հիվանդանոց:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների՝ դեպքը եղել է Դավիթաշենի վարչական շրջանի 93 դպրոցում: Մասնավորապես, ըստ «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի՝ ռազմագիտության դասի ժամանակ տղաները նախազորակոչային վարժություն են իրականացրել, որի ժամանակ պատահական գործարանային օդամղիչ ատրճանակից կրակոց է հնչել ու կպել աշակերտներից մեկին:

SHAMSHYAN.com-ը գրել էր, որ հոկտեմբերի 14-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 16:45-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Մաշտոցի բաժնում եւ ոստիկանության Դավիթաշենի բաժանմունքում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Երեւանի դպրոցներից մեկից հրազենային վնասվածքով Երեւանի պոլիկլինիկաներից մեկում բուժօգնության է դիմել մի աշակերտ, ով ռազմագիտության դասարանում օդամղիչ հրացանից արձակված գնդակից ստացել է մարմնական վնասվածք:

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱԿԻՐ ԱՆՁԻՆՔ

ոկտեմբերի 19-ի գիշերը հերթական հանցավոր արարքն է կատարվել ոստիկանության ծառայողների կողմից: Հայտնում է փաստաբան Հովհաննես Խուդոյանը:

«Հիմք ընդունելով ակնհայտ կեղծ «օպերատիվ տվյալները» իբր թե զենք ունենալու մասին՝ մի խումբ ոստիկաններ ձերբակալել են Սրբազան Պայքարի համակիր անձին, դիմադրության բացակայության պայմաններում նրա նկատմամբ կիրառել բռնություն:

Հրապարակվել է նաեւ տեղեկություն, որ նույն ժամանակ եւս մի քանի անձ նույն եղանակով ձերբակալվել են:

Կրկին կեղծ օպերատիվ տեղեկությունների հիման վրա եւս մեկ անձ ձերբակալվել էր մեկ շաբաթ առաջ, ու թեեւ ժամեր անց ազատ էր արձակվել, սակայն իր մեքենան կարողացել էր հետ ստանալ միայն օրեր անց:

Կեղծված օպերատիվ տվյալների հիման վրա տարբեր քննչական բաժիններում դեռեւս մայիսից պահվում են տասնյակ քաղաքացիների տրանսպորտային միջոցներ:

Չնայած այս հետապնդումները իրականացվում են իրավապահ մարմինների ղեկավար անձանց կազմակերպմամբ, սակայն փոքր չէ նաեւ լիազորությունները չարաշահող քննիչների ու ոստիկանների պատասխանատվությունը:

Առաջիկա օրերին՝ գործընկերների հետ քննարկումից հետո, ԶԼՄ-ներին կներկայացնեմ այս գործընթացների մանրամասն տվյալները, ինչպես նաեւ այն քայլերը, որոնք նախաձեռնվելու են լիազորությունները չարաշահող պաշտոնատար անձանց նկատմամբ»,- գրել է նա:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 19-ից 21-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 186 դեպք, որից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԱՇՆԱՆԱՑԱՆ ՉԵՆ ԿԱՐՈՂԱՑԵԼ ԱՆԵԼ

Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, թե Կիրանցի պատը 3-րդ հանրապետության ամենամեծ հաջողությունն է, որովհետեւ, նրա խոսքով, դրանից Հայաստանը ստացել է «պետական սահման, խաղաղություն ու անվտանգություն, բայց փոքր հատվածում»: Կիրանցում բնակիչների հետ հանդիպմանը Փաշինյանը հայտարել է «Մեր մտածածն էն ա, որ ասեք՝ վա՛յ, էս ի՞նչ լավ ա, որ 50 մետր էն կողմ Ադրբեջան ա...»: Կիրանցի բնակիչներին հարցրինք, թե իրենք սահմանի այդ հատվածում «խաղաղություն, անվտանգություն» զգո՞ւմ են: Բնակիչներն ասացին, որ իրենք անհանգստություն եւ վտանգներ են զգում, քանզի ամեն օր տեսնում են Ադրբեջանին հանձնված տարածքում կանգնեցված Ադրբեջանի դրոշը, տեսնում են, թե այնտեղ ադրբեջանցի զինվորականներ են հայտնվում, ադրբեջանցիներն այդ տարածքում քեֆեր են անում: Սահման դարձած պատի կողքին ապրող Կիրանցի բնակիչ Միեր Ավալյանի ընտանիքն ամեն օր անհանգստությամբ է նայում սահմանազատման անվան տակ Ադրբեջանին հանձնված տարածքում կատարվողին: Ադրբեջանին հանձնված 64 հեկտար վարելահողերում, ի տարբերություն նախորդ տարվա՝Կիրանցի բնակիչները ադրբեջանական 2 հենակետերի արանքում հայտնված տարածքում ընդհանրապես աշնանացան չեն արել: Այս ամառ ադրբեջանական կողմը թույլ չի տվել, որ այդ տարածքում մոտ 14 հեկտար հացահատիկը հնձելու համար Խերմիլի գյուղի միջով կոմբայն անցկացնեն, կոմբայնն այլ կերպ են անցկացրել: Ադրբեջանցիները իրենք են հնձել Խերմիլի գյուղի մոտակա տարածքում Կիրանցի բնակիչների ցանած մի քանի հեկտար ցորենի արտերը: Սահմանազատումից, տարածքները հանձնելուց հետո Կիրանցում շատ քիչ թվով խոշոր եղջերավոր անասուններ են մնացել, մինչդեռ գյուղում թվով 14 կով պահողներ կային: Քանի որ գյուղի արոտավայրերը հանձնվել են Ադրբեջանին, անցյալ տարի Սեւքարի անտառտնտեսությունը փշալարով փակել է Կիրանցից Ոսկեպար հատվածում գտնվող անտառը, Կիրանցը մնացել է առանց արոտավայրի:

ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ

Դիլիջան քաղաքի բնակիչները հայտնեցին՝ երբ իրենց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի հետ կապված ինչ-որ գործարք են կատարում,Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը, սեփականատերերից, բացի, կադաստրից տրված սեփականության վկայականը, պահանջում է հողամասի վերաբերյալ դատարանի վճիռ: Բնակիչները զարմացած են օրենքից ՔՊ-ական համայնքապետի նման անտեղյակությունից: Դավիթ Սարգսյանը նախկինում բենզալցակայանում լիցքավորող, նաեւ իր ավտոմեքենայով պատվիրատուներին ավազ ու ցեմենտ մատակարարող է եղել, նա ավարտել է Դիլիջանի պետական քոլեջը, այժմ հեռակա սովորում է Հայաստանի Եվրոպական համալսարանում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

ՏԱՐԵԿԱՆ 66,42 ՄԼՆ ԱՄՆ ԴՈԼԱՐ ԿՈՐՈՒՍՏ ԵՆՔ ՈՒՆԵՆՈՒՄ

COP-ը Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի (UNFCCC) միջազգային հանդիպում է, որը կենտրոնանում է կլիմայի վրա:

COP-ը ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի հիմնական որոշումներ կայացնող մարմինն է: Այն ներառում է բոլոր «Կուսակցությունների» ներկայացուցիչներին, այսինքն՝ երկրներ, որոնք համաձայնել են մասնակցել եւ պարտավորված են ներկա գտնվել ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիային:

ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի COP-ը տեղի է ունենում ամեն տարի եւ հնարավորություն է բանակցելու նոր միջոցառումների շուրջ եւ վերանայելու Կողմերի առաջընթացը՝ ընդդեմ Կլիմայի փոփոխությունը սահմանափակելու ընդհանուր նպատակի:

Ընդհանուր առմամբ, յուրաքանչյուր COP համաձայնում է հայտարարության կամ պարտադիր համաձայնագրի հետ, որը հրապարակվում է համաժողովի վերջում: 2023 թվականին COP28-ում Կողմերը համաձայնել են ԱՄԷ-ի կոնսենսուսին:

Այնուամենայնիվ, COP-ը կարող է անդրադառնալ նաեւ պայմանագրային այլ մարմինների կառավարման ժողովներին: Բացի ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի COP29-ից, կան նաեւ երկու այլ կարեւոր բնապահպանական COP-եր, որոնք տեղի են ունենում 2024 թվականին Բաքվում:

Հայաստանը, համաձայն 2015 թվականին ՄԱԿ-ի աղետների ռիսկերի նվազեցման գրասենյակի տրամադրած տվյալների՝ ամեն տարի միջինում կլիմայի փոփոխության արդյունքում ունենում է 66,42 մլն ԱՄՆ դոլարի կորուստ:

Ասիայում կլիմայի փոփոխության պատճառով ամենաշատ կորուստները գրանցում է Պակիստանը 1 մլրդ 327 մլն ԱՄՆ դոլարի չափով, ապա հաջորդում է Ղազախստանը՝ 865.07 մլն ԱՄՆ դոլար:

Վերակառուցման եւ զարգացման բանկի տվյալներով՝ դեպի ծով ելք չունեցող լեռնային երկիր լինելով՝ Հայաստանը կլիմայի փոփոխության տեսանկյունից ամենախոցելի երկրների շարքում է: Հայաստանի համար կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ազդեցությունները, օրինակ՝ երաշտները, սողանքները, սելավները, եղանակային ծայրահեղ պայմանները, նշանակում են, որ կլիմայի փոփոխության հարմարվողականությունը երկրի համար առաջնահերթություն է:

Այս տարի, ինչպես նշեցինք արդեն, COP29-ը նշվելու է Բաքվում: Հայաստանի իշխանությունների կողմից դեռ հստակ պատասխան չկա, թե համաժողովին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն է մասնակցելու թե ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը, նաեւ հստակ չէ արդյոք առհասարակ կմասնակցե՞ն, թե՞ ոչ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ

ՄՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆԵՐԻ ԱՃԸ ԵՎ ՆՎԱԶՈՒՄԸ 2023-2024 ԹԹ.

«Ժողովուրդ» օրաթերթը, ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալներից օգտվելով, ներկայացնում է 2024 թվականի սպառողական գների ինդեքսը 2023 թվականի նույն ժամանակահատվածի հետ համեմատած:

Այսպիսով՝ 2024թ. սեպտեմբերին 2023թ. սեպտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է հնդկացորենի 12.2%, ձավարի՝ 6.7%, մակարոնեղենի՝ 6.2%, իսկ 2024թ. օգոստոսի համեմատ՝ համապատասխանաբար՝ 1.4%, 1.3%, 1.2% գնանկում:

Մարգարինի գինը 2024թ. սեպտեմբերին 2023թ. սեպտեմբերի համեմատ նվազել է 16.3%-ով, իսկ 2024թ. օգոստոսի համեմատ՝ 1.1%-ով:

2024թ. սեպտեմբերին 2023թ. սեպտեմբերի համեմատ թեյի գինն աճել է 2.4%-ով, շոկոլադինը՝ 4.3%- ով, իսկ 2024թ. օգոստոսի համեմատ արձանագրվել է համապատասխանաբար 0.8% եւ 0.9% գնանկում:

Միաժամանակ, 2024թ. սեպտեմբերին 2023թ. սեպտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է խոզի եւ տավարի մսերի՝4.5% եւ 0.6% գնանկում, իսկ 2024թ. օգոստոսի համեմատ՝համապատասխանաբար 1.2%, 0.8% գնաճ:

2024թ. սեպտեմբերին 2023թ. սեպտեմբերի համեմատ հաճարի գինը նվազել է 4.7%-ով, հրուշակեղենինը՝ 3.3%-ով, թարմ կաթինը՝ 1.8%-ով, հացինը՝ 0.4%-ով, իսկ 2024թ. օգոստոսի համեմատ գրանցվել է համապատասխանաբար 0.6%, 0.8%, 0.5%, 0.3% գնաճ:

Արեւածաղկի բուսական յուղի գինը 2024թ. սեպտեմբերին 2023թ. սեպտեմբերի համեմատ նվազել է 6.1%-ով, իսկ 2024թ. օգոստոսի համեմատ գրանցվել է 1.1% գնաճ:

«Իշխան» ձկնատեսակի գինը 2024թ. սեպտեմբերին 2023թ. սեպտեմբերի համեմատ նվազել է 3.4%-ով, իսկ 2024թ. օգոստոսի համեմատ արձանագրվել է 2.2% գնաճ:

Ձվի գինը 2024թ. սեպտեմբերին 2023թ. սեպտեմբերի համեմատ աճել է 8.0%-ով, իսկ 2024թ. օգոստոսի համեմատ՝ 0.1%-ով:

2024թ. սեպտեմբերին 2023թ. սեպտեմբերի համեմատ ալյուրի գինն աճել է 1.0%-ով, սուրճինը՝ 9.2%- ով, կարագինը՝ 1.2%-ով, իսկ 2024թ. օգոստոսի համեմատ՝ 1.2%, 0.5%, 1.5%-ով:

2024թ. սեպտեմբերին 2023թ. սեպտեմբերի համեմատ շաքարի եւ շաքարավազի ապրանքախմբում արձանագրվել է 7.4%, իսկ 2024թ. օգոստոսի համեմատ՝ 0.3% գնաճ:

Բանջարեղենի ապրանքախմբում 2024թ. սեպտեմբերին 2023թ. սեպտեմբերի եւ 2024թ. օգոստոսի համեմատ արձանագրվել է 4.3% գնանկում:

Ստացվում է, որ 2023 թվականի համեմատ 2024 թվականի սեպտեմբերին թանկացել են թեյը, շոկոլադը, խոզի միսը, տավարի միսը, հրուշակեղենը, թարմ կաթը, հացը, ձեթը, գրեթե բոլոր ձկնատեսակները, ձուն, ալյուրը, սուրճը, շաքարավազը:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 50 պատահար. 3 մարդ զոհվել է, 86-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում.

1. Իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝«դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Շիրակի մարզ, համայնք Արթիկ, Արթիկ ք., Սասունցի Դավթի փողոց, 22 շենք, 3 հասցեում գտնվող 69,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 10500000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, գյուղ Վերին Պտղնի, Նոր թաղամասի 1-ին փողոց, 6 հասցեում գտնվող 243 ք.մ. բնակելի տուն, 9,9 քմ սանհանգույց, 39,7 քմ ավտոտնակ, 50,4 քմ լողավազան եւ 0,113 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 149400000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Կենտրոն, Արգիշտիի փողոց, 11/12 շենք, 12 հասցեում գտնվող 154,8 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 139720000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, Աբովյան ք., Երիտասարդական փողոց, 4 շենք, 25 հասցեում գտնվող 55,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝21900000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Քանաքեռի 2-րդ փողոց, 61/3 հասցեում գտնվող 307,6 քմ բնակելի տուն, 1,8 քմ /3,6 խմ, 9 գծամետր/ պարիսպ եւ 0,03149 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝87890000 ՀՀ դրամ:
- Տավուշի մարզ, համայնք Իջեւան ք., Վ. Տերյան փողոց, 3-րդ նրբանցք, 31 հասցեում գտնվող 157,95 ք.մ. բնակելի տուն, 9,36 քմ ամառանոց, 2,26 քմ /4,07 խմ/ պարիսպ, 2,32 քմ /4,18 խմ/ պարիսպ եւ 0,06999 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝20000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 07.11.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝12.12.2024թ.-ին:

2. Շարունակելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը.

- ք. Երեւան, Նոր-Նորք, Գյուլիքեխվյան փողոց, 5 շենք, 3 հասցեում գտնվող 79,2 ք.մ. բնակարան եւ 8,8 քմ ինքնակամ շինություն: Լոտի մեկնարկային գինը՝ 33780000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 07.11.2024թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝12.12.2024թ.- ին:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն:

Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

ԻՆՉ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ ՆՈՐ ՕՐԵՆՔԸ

ՈՎՔԵՐ ՊԵՏՔ Է ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ

Ազգային ժողովը 2022 թվականի դեկտեմբերին ընդունեց քաղաքացիների եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգ ներդնելու նախագիծը, ըստ որի՝ բոլոր հայաստանցիները 2025 թվականից պարտավորված կլինեն տարեկան մեկ անգամ իրենց եկամուտների մասին հաշվետվություն ներկայացնել պետությանը:



2023 թվականի համար պարտավոր էին հայտարարագիր ներկայացնել

ա) հանրային ծառայողները,

բ) այն անձինք, ովքեր բիզնեսով են զբաղվում՝ հիմնականում խոշոր բիզնեսի ներկայացուցիչները, փոքր եւ միջին բիզնեսը դեռ չի մտնում այս ցանկում,

գ) այն մարդիկ, ովքեր բանկում փոխառություններ ունեն, օրինակ՝ հիփոթեքային վարկեր են վերցրել՝ 20 մլն դրամից ավելի: Այդ երեք խումբն է 2024-ին 2023-ի համար հայտարարագիր են ներկայացրել»:

2024 թվականի համար պետք է 2025 թվականի հունվարի 1-ից հայտարարագիր ներկայացնեն բոլոր աշխատողները, ինչպես նաեւ փոքր ու միջին բիզնեսի ներկայացուցիչները:

Ի՞նչ է անհրաժեշտ եկամուտների հայտարարագիր ներկայացնելու համար: ArmLur.am-ը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կայքից տեղեկանում է՝ կա 2 տարբերակ:

Տարբերակ առաջին

Բջջային հեռախոսի միջոցով, ինչի համար անհրաժեշտ է՝

ունենալ նույնականացման քարտ (ID Card), իսկ չունենալու դեպքում՝ ձեռք բերել այն ՀՀ ՆԳՆ Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության տարածքային ցանկացած գրասենյակից:

Նույնականացման քարտով եւ բջջային հեռախոսով այցելել Ձեր կամ նախընտրելի այլ բջջային կապի օպերատորի ցանկացած սպասարկման կենտրոն, որտեղ բջջային հեռախոսահամարի քարտը (SIM) կփոխարինվի նոր քարտով, իսկ օպերատորին փոխելու դեպքում՝ կտեղադրվի նոր քարտ:

Բջջային կապի օպերատորի սպասարկող անձնակազմի օգնությամբ եւ Ձեր մասնակցությամբ ակտիվացնել էլեկտրոնային նույնականացումը:

Ակտիվացնել էլեկտրոնային ստորագրության ծառայությունը՝ կապի օպերատորի սպասարկման կենտրոնում, ինչպես նաեւ ինքնուրույն՝վճարային տերմինալների միջոցով կամ այցելելով՝էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակի կայք:

Տարբերակ երկրորդ

Էլեկտրոնային կրիչ պարունակող նույնականացման քարտով, ինչի համար անհրաժեշտ է՝

ունենալ մինչեւ 2023 թվականի փետրվարի 15-ը Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության տարածքային գրասենյակից ստացած էլեկտրոնային չիպ պարունակող վավեր նույնականացման քարտ, որի հետ առանձին ծրարով տրամադրվել են PIN եւ PUK ծածկագրեր:

Ունենալ ընթերցող սարք, որը կարող եք նաեւ ձեռք բերել «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ից:

Այցելելով կայք եւ հետեւելով ուղեցույցներին՝ ակտիվացնել էլեկտրոնային քարտը եւ ստանալ էլեկտրոնային ստորագրություն:

Անհարժեշտ է ընդգծել, որ այժմ Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության տարածքային գրասենյակները PIN եւ PUK ծածկագրեր չեն տրամադրում, անհրաժեշտ է մետեւալ բջջային օպերատորի գրասենյակ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

IDBank

ԲԱՆԿԸ՝ HR Expo 2024 ՄԱՄՆԱԿԻՑ

IDBank-ը մասնակցեց HR Expo 2024-ին՝ ներկայացնելով աշխատավարձային համակարգի իր բացառիկ լուծումը՝ IDsalary փաթեթը: HR Expo-ն B2B էքսպո-կոնֆերանս է, որը միավորում է HR մասնագետներին, բիզնես առաջնորդներին եւ ոլորտի փորձագետներին: Մեկօրյա միջոցառումը կարեւոր հարթակ է՝ գիտելիքներ կիսելու եւ մարդկային ռեսուրսների կառավարման տեխնոլոգիաների ու լուծումների նոր միտումներին ծանոթանալու համար:

IDBank-ի ինստիտուցիոնալ բիզնեսի եւ համագործակցության վարչության թիմը ներկա էր էքսպոյին՝ կազմակերպությունների ներկայացուցիչներին պատմելու բանկի աշխատավարձային փաթեթի առանձնահատկությունների մասին, որոնք լավագույնս կծառայեն ընկերությունների աշխատակիցների ֆինանսական կարիքներին:

IDsalary փաթեթն առաջարկում է ճկուն եւ հարմարավետ տարբերակ աշխատավարձերի փոխանցման համար՝ միաժամանակ տրամադրելով մի շարք արտոնություններ, որոնք բարելավում են աշխատակիցների բանկային փորձառությունն ու ֆինանսական բարեկեցությունը:

IDBank-ի ինստիտուցիոնալ բիզնեսի եւ համագործակցության վարչության ղեկավար Արթուր Սեյրանյանը նշում է, որ բանկում մշտապես ներդնում են առավելագույն ջանքերը՝ բիզնես հաճախորդների համար ստեղծելու անհատականացված բանկային լուծումներ՝հարմարեցված վերջիններիս կարիքներին, որոնք առավելագույնս ծառայում են բիզնեսների կայուն զարգացմանն ու աճին: «IDBank-ում մենք գիտակցում ենք բիզնեսների մարտահրավերները՝ ապահովելով աշխատավարձային համակարգի արդյունավետություն եւ աշխատակիցների համար առավելությունների ստեղծում: HR Expo-ն եւս մեկ հիանալի հնարավորություն է՝ ընկերություններին պատմելու եւ ներկայացնելու մեր բացառիկ փաթեթը», - ասաց Արթուր Սեյրանյանը:

IDsalary աշխատավարձային նախագծին միանալու առաջին քայլն է փաթեթի ակտիվացումը, որը ենթադրում է բիզնեսի համար հաշվի բացում, օնլայն եւ մոբայլ բանկինգ համակարգերի տրամադրում, որն էլ լիովին անվճար է: Իսկ ընկերությունների աշխատակիցների ժամանակը խնայելու համար քարտի տրամադրման գործընթացն իրականացվում է հեռավար, եւ բանկ այցելելու կարիք չկա:

Փաթեթի շրջանակում աշխատակիցներն օգտվում են մի շարք առավելություններից. միջազգային Mastercard-ի տրամադրում անվճար անվճար կանխիկացում ArCa համակարգի բանկերի բանկոմատներից Mastercard Standard կամ Visa Gold քարտատեսակներ՝ սպասարկման շահավետ պայմաններով:

ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԳՆԱՀԱՏԵԼՈՎ ՄԵՐ ՄԵԾԵՐԻՆ

ՄԵԾ ՄԱՆԿԱԳԻՐՆ ՈՒ ՄԱՆԿԱՄԻՐՏԸ. ԽՆԿՈ ԱՊԵՐ

Աթաբեկ Խնկոյանը, ով առավել հայտնի է որպես Խնկո Ապեր, իր մեծ ավանդն է ունեցել հայ գրականության և հատկապես մանկագրության մեջ:



Օրերս Աթաբեկ Խնկոյանի ծննդյան օրն էր. նման հոբելյանները ավելի են ուժեղացնում հետաքրքրությունը հեղինակի եւ նրա ստեղծագործությունների նկատմամբ:

Խնկո Ապերը գրել է առակներ, լեգենդներ, հեքիաթներ, բանաստեղծություններ, պոեմներ:

Իսկ ինչո՞ւ են նրան ասել Խնկո Ապեր

Աթաբեկ Խնկոյանին անվանել են Խնկո Ապեր հատկապես նրա սրտացավ վերաբերմունքի համար, կրթական գործին ունեցած նվիրվածության եւ իր ժողովրդի հանդեպ մեծ սիրո համար: Խնկո Ապերը մանկավարժ եւ գրող էր, ով կարեւորում էր երեխաների կրթությունը եւ դաստիարակությունը: Նրա սրտացավ վերաբերմունքը, հայրական մոտեցումը եւ հոգատարությունը երեխաների նկատմամբ ձեւավորել են նրա «Խնկո Ապեր» անունը, ինչը նշանակում է «հոգատար եղբայր»: Նա իր կյանքն ու գործունեությունը նվիրել է կրթության եւ գրականության զարգացմանը, ինչը հայ հասարակության կողմից մեծապես գնահատվել է:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է գրողի կյանքից հետաքրքիր դեպքեր:

Աթաբեկ Խնկոյանի կյանքից մի հետաքրքիր պատմություն կա, որը փաստում է նրա նվիրումն ու սրտացավությունը երեխաների նկատմամբ:

Պատմում են, որ մի անգամ Խնկո Ապերը, լինելով ուսուցիչ գյուղական մի դպրոցում, նկատում է, որ իր աշակերտներից մեկը՝ մի փոքրիկ տղա, հաճախ գալիս է դպրոց՝ առանց անհրաժեշտ գրենական պիտույքների՝ տետրերի ու գրիչների: Նա չէր ցանկանում պատժել տղային կամ կշտամբել, քանի որ հասկանում էր, որ երեխայի ծնողները միգուցե պարզապես չունեն ֆինանսական միջոցներ դրանք գնելու համար:

Մի օր Խնկո Ապերը իր մոտ է կանչում տղային եւ առանց նրան նեղություն պատճառելու՝ խնամքով հարցնում է, թե ինչու է միշտ առանց տետրերի գալիս: Տղան ամաչելով ասում է, որ ընտանիքը շատ աղքատ է, եւ նրանք չեն կարող իր համար անհրաժեշտ իրեր գնել: Խնկո Ապերը, հասկանալով իրավիճակը, գնում է քաղաքի միակ գրախանութը եւ սեփական միջոցներով գնում է տղայի համար գրքեր, տետրեր եւ գրիչներ, հետո դրանք տալիս է տղային եւ ասում՝ «Սրանք քեզ եմ տալիս, քանի որ գիտեմ, որ կսովորես ավելի լավ ու ավելի մեծ մարդ կդառնաս»

Խնկո Ապերը ոչ միայն ուսուցիչ էր, այլեւ հոգատար մարդ, ով հասկանում էր իր աշակերտների կարիքները եւ պատրաստ էր օգնել նրանց՝ կյանքում առաջ գնալու:

Ինչպես ասում են՝ կա նաեւ մեդալի հակառակ կողմը

Աթաբեկ Խնկոյանի կյանքից եւս մի հետաքրքիր դեպք կա, որն էլ արտահայտում է նրա բարոյական արժեքներն ու սկզբունքները:

Պատմում են, որ մի անգամ Խնկո Ապերը ուսուցանում էր մի դպրոցում, որտեղ հաճախ էին գալիս ծնողներ՝ իրենց երեխաների համար հովանավորություն խնդրելու: Մի ծնող, ով բարեկեցիկ կյանք էր վարում, առաջարկում է Խնկո Ապերին ֆինանսական միջոցներ՝ իր որդուն «հատուկ» ուշադրություն դարձնելու համար: Տղան բավականին լավ ընտանիքից էր, սակայն աչքի ընկնում էր իր ծուլությամբ եւ վատ էր սովորում: Ծնողը ակնկալում էր, որ Աթաբեկ Խնկոյանը հատուկ մոտեցում կցուցաբերի իր որդուն՝ միաժամանակ ընդունելով նվիրատվությունը:

Խնկո Ապերը, լսելով այս առաջարկը, հանգիստ, բայց հաստատապես մերժում է այն՝ ասելով՝ «Գրականության ու գիտելիքի ոլորտում ոչ ոք հովանավորչության կարիք չունի: Այստեղ ամեն ինչ արդար է, եւ յուրաքանչյուր երեխա ստանում է այն, ինչին արժանի է իր աշխատանքով ու ջանքերով»:

Այս պատասխանը ցույց է տալիս Խնկո Ապերի բարոյական դիրքորոշումը՝ հավասարության եւ արդարության հանդեպ: Նա չէր ընդունում կաշառք կամ հատուկ վերաբերմունք, անկախ հանգամանքներից եւ ուսուցման գործընթացում առաջնահերթությունը միշտ տալիս էր արդարությանը եւ երեխաների իրական կարողություններին ու ջանքերին:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՄՇԱԿՈՒՅԹԸ՝ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՐՈԶՉԱՄԻՋՈՑ

Ադրբեջանական իշխանությունների պատվերով աշխարհի տարբեր երկրներում պարբերաբար անցկացվում են տարատեսակ ցուցահանդեսներ եւ միջոցառումներ՝ այսպես կոչված «Արեւմտյան Ադրբեջան» կեղծ թեզի տարածման նպատակով: Հերթական միջոցառումն անցկացվել է Լեհաստանի մայրաքաղաքում:

Վարշավայում տեղի ունեցած «Արեւմտյան Ադրբեջանը մեր հուշերում» խորագրով ցուցահանդեսի շրջանակներում «Արեւմտյան Ադրբեջան» համայնքի խոսնակ Ուլվիյյա Ջուլֆիգարը հանդիպել է Լեհ- ադրբեջանական խորհրդարանական խմբի ղեկավար Փշեմիսլավ Վիտեկի հետ: Համայնքի խոսնակը ներկայացրել է «20-րդ դարում «արեւմտյան ադրբեջանցիների» փուլային տեղահանության»,

«Հայաստանի Հանրապետության տարածքում ադրբեջանցիներին պատկանող «հարուստ» ժառանգության ոչնչացման մասին» կեղծ թեզերը: Ըստ համայնքի խոսնակի՝ «արեւմտյան ադրբեջանցիները», ովքեր «բռնի ուժով հեռացվել են իրենց պապենական հողերից, այսօր ապրում են հայրենիքի կարոտով եւ միջազգային իրավունքի նորմերի եւ սկզբունքների համաձայն՝ իրավունք ունեն հետ վերադառնալու»:

«Արեւմտյան Ադրբեջան» կեղծ թեզն ադրբեջանական իշխանությունների կողմից առավել ակտիվ սկսեց շահարկվել Արցախյան վերջին պատերազմից հետո:

Տարակուսելի է, որ Լեհաստանի ներկայացուցիչը, ով զրույցի ընթացքում կարեւորել է «վերադարձի իրավունքի իրագործման կարեւորության մասին՝ որպես միջազգային իրավունքի սկզբունք, առհասարակ չի հիշել Ադրբեջանի տարածքում հայերի կոտորածների եւ Արցախից տեղաբնիկ հայերի բռնի տեղահանության մասին:

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամը խստորեն դատապարտում է Ադրբեջանի իշխանությունների վարած քաղաքականությունը, «Արեւմտյան Ադրբեջան» շինծու թեզի առաջքաշումը եւ հորդորում միջազգային գործընկերներին զերծ մնալ ալիեւյան ռեժիմի ծավալապաշտական քաղաքականությանն այս կամ այն կերպ նպաստելուն:

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ Հայաստանի պետական կամերային նվագախումբը հոկտեմբերի 16-31-ը հանդես է գալիս համերգային բացառիկ շրջագայությամբ՝ Շառլ Ազնավուրի 100-ամյակի հոբելյանական միջոցառումների շրջանակում:

Համերգային շրջագայությունն ընդգրկում է 6 երկիր եւ 9 քաղաք, որոնցում տեղի կունենա 9 համերգ: Համերգներ կկայանան Իտալիայում, Անգլիայում, Ուելսում, Բելգիայում, Գերմանիայում եւ Ֆրանսիայում:

Կհնչեն Ազնավուրի ստեղծագործությունները՝ նոր մշակումներով եւ գործիքավորումներով:

Կամերային նվագախմբի առաջին համերգը կայացել է հոկտեմբերի 17-ին Վենետիկի Սուրբ Ղազար կղզում:

Համերգների ծրագրերում ընդգրկված են բացառապես հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ՝ Շառլ Ազնավուր, Կոմիտաս, Ռոբերտ Ամիրխանյան, Տիգրան Մանսուրյան, Ռուբեն Ալթունյան եւ Արթուր Սահարոնյան:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆՎԱՃԱԾ ՄԵԴԱԼԸ ՆՎԻՐԵԼ Է ԸՆԿԵՐՈՋ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Իրանում Հայաստանի Հանրապետության դեսպանություն է այցելել կիոկուշին կարատեի իրանցի մարզիկ Ահմադ Բաղերին եւ ի հիշատակ 44-օրյա պատերազմում զոհված իր ընկեր Արթուր Սուքիասյանի՝ արտակարգ եւ լիազոր դեսպան Արսեն Ավագյանին հանձնել վերջերս Դանիայի Ալբորգ քաղաքում կայացած մրցապայքարում նվաճած ոսկե մեդալը:

Այս մասին տեղեկացնում է Իրանում Հայաստանի դեսպանության «Ֆեյսբուք»-ի էջը:

Ըստ աղբյուրի՝ դեսպան Ավագյանը բաձր է գնահատել իրանցի մարզիկի քայլը, նրան մաղթել մարզական մեծ հաջողություններ եւ խոստացել ստացված մեդալը փոխանցել Արթուր Սուքիասյանի ընտանիքին:

ԵՐԿԱՐԱՁԳԵԼ Է ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի կիսապաշտպան Տիգրան Բարսեղյանը երկարաձգել է պայմանագիրը «Սլովան»-ի հետ:

Սլովակիայի բազմակի չեմպիոն Բրատիսլավայի «Սլովան»-ը Տիգրան Բարսեղյանի հետ պայմանագիրը երկարաձգել է մինչեւ 2027 թվականի հունիս ամիսը:

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի կիսապաշտպան Տիգրան Բարսեղյանը «Սլովան» տեղափոխվել է 2022 թվականին: Նա այդ ակումբի կազմում երեք անգամ դարձել է Սլովակիայի չեմպիոն:

ԱՌԱՔՆՈՒԹՅՈՒՆ ԱՎԱՐՏՎԵՑ 5 ՄԵԴԱԼՈՎ

Հայաստանի բռնցքամարտի հավաքականը մինչեւ 23 տարեկանների Եվրոպայի առաջնությունն ավարտեց 5 մեդալով: Այս մասին հայտնում է Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիան:

Կարեն Աղամալյանի գլխավորությամբ մեր ընտրանին նվաճեց 2 ոսկե եւ 3 արծաթե մեդալ:

Մրցաշարի ընթացքում մեր բռնցքամարտիկների կողքին էր Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Հովհաննես Հովսեփյանը:

60 կգ Էլիդա Քոչարյան
51 կգ Ռուդոլֆ Գարբոյան
57 կգ Ռուսլան Ասլիկյան
60 կգ Արթուր Սահակյան
67 կգ Հարություն Հակոբկոխյան:

ԱՌԱՔԱՏԱՐ

Գրոսմայստեր Արամ Հակոբյանը շարունակում է գլխավորել Ղազախստանում ընթացող «Pavlodar Open 2024» շախմատի միջազգային մրցաշարի աղյուսակը:

Հակոբյանը 8 հնարավորից վաստակել է 6.5 միավոր եւ Հնդկաստանը ներկայացնող Այուշ Շարմայի հետ կիսում է 1-2-րդ հորիզոնականները:

Հայաստանից մրցաշարին մասնակցում է նաեւ գրոսմայստեր Մանուել Պետրոսյանը, ով ունի 5 միավոր:

● *Նոյեմբերի 9-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Ռոմեո եւ Ջուլիետ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԱՐՑ. Արդյոք հնարավո՞ր է գրանցման/վերագրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ առանց գործակալություն ֆիզիկապես ներկայանալու:

Արամ Ստեփանյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո՛, ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 1109-Ն որոշման հավելված 2-ի համաձայն՝ հասարակական կազմակերպությունների պետական գրանցման, փոփոխությունների պետական գրանցման կամ պետական գրանցման մերժման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորն իրականացնում է դիմողի նույնականացման, պետական տուրքի գանձման, փաստաթղթերի ընդունման, փոխադրման եւ հանձնման գործառույթներ:

Իրավաբանների հայկական ասոցիացիա

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վերոնշյալ որոշման հավելված 1-ով սահմանված է օպերատորների ցանկը, որոնք են՝

1. «ՀԱՅՓՈՍՏ» փակ բաժնետիրական ընկերություն
2. «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն
3. «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն
4. «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն
5. «ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն
6. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն
7. «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն
8. Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե
9. «ՄՈԲԻ ԴՐԱՄ» փակ բաժնետիրական ընկերություն
10. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն:

Հետեւաբար փաստաթղթերը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն հնարավոր է ներկայացնել վերոնշյալ ընկերությունների գրասենյակների միջոցով:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Ի՞նչ է կենտրոնական բանկի անկախությունը, եւ ինչպե՞ս է այն չափվում:

Աշոտ Գեւորգյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գների կայունության ապահովման համար ինստիտուցիոնալ կարեւոր նախապայման է ԿԲ-ների անկախությունը: Ուսումնասիրությունները վկայում են, որ ԿԲ-ների անկախությունը (գործառնական) նպաստում է իրականացվող դրամավարկային քաղաքականության վարկունակությանը՝ մեծացնելով շուկայի արձագանքը ԿԲ ազդակներին: Էմպիրիկ վերլուծությունները բացահայտել են ԿԲ-ի անկախության եւ ցածր գնաճի միջեւ ուղղակի կապ:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Դրամավարկային քաղաքականության իրականացման առումով տարբերակում են ԿԲ-ի անկախության երեք աստիճան՝

- նպատակի սահմանման,
- նպատակային ցուցանիշի սահմանման,
- գործառնական:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեկվանից համացանցում եւ դրանից դուրս քննարկվում է հռչակավոր կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի 100-ամյակին նվիրված այս «հանճարեղ» ինստալյացիան: ԿԳՄՍՆ՝ իբրեւ կազմակերպիչ, փորձել է օրիգինալ մոտեցում ցուցաբերել՝ առանց գիտակցելու, որ նման մակերեսային, համատեքստից կտրված փարաջանովյան դետալները լղոզելով ոչ միայն իրենց անգիտությունն են ցուցադրում, այլեւ աղարտված են ներկայացնում մեծ արվեստագետի գեղագիտությունն ու արժանիքը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 7 +14 + 18
Կոտայքի լեռներ	+3 + 6 +13 + 15
Կոտայքի նախալեռներ	+9 + 11 +17 + 19
Գեղարքունիք	+3 + 8 +11 + 15
Լոռի	+ 3 + 7 +12 + 16
Տավուշ	+ 7 + 13 +15 + 19
Արագածոտնի լեռներ	+ 1 + 5 +12 + 15
Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 11 +17 + 20

Արարատ	+ 9 + 11 +19 + 22
Արմավիր	+ 7 + 10 +19 + 22
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 +12 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 11 +19 + 21
Սյունիքի հովիտներ	+ 7 + 12 +18 + 23
Սյունիքի նախալեռներ	+ 1 + 5 +15 + 18
ԼՂՀ	+ 2 + 6 +15 + 18
Երեւան	+15 + 18 + 22 + 24

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.10.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*